



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9812



6004
5990

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ



ԲՈՂՈՔ

ԱՌ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՂՃՄՏԱՆՔՆ



Գրեց

Հ. ԱՌԱՔՍԷՍՆ



Պ Ա Ր Ի Ձ

Հայկական տպարան


1902

9812

ԵՄ. ՊԵՏ. ՄՍՏԵՆԻԿ ԲԱՆ
ՀԱՅԿԱՅԻՆ ԽՂՃՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
N

ՀԱՍԱՐԱԿԱՑ

ԴԱՏԱՍՏԱՆԻՆ



I

Մի ծանր եւ տխուր պարտականութիւն ունինք կատարելու մենք պէտք է անսահման վշտացնենք բոլոր նրանց, որոնք ներշնչված են կենդանի եւ ջերմեռանդ հաւատով դէպի մարդկային աւնութիւնը, դէպի գրիչն եւ այդ գրչից դուրս եկած ամեն մի խօսքն հաւատացել են անպայման, իսկ նրա գրողին՝ համարել քաղցր-ւութեան տիպար: Անհուն վշտով պէտք է համակրէն նրանք, երբ իմանան, որ հայրենասիրութեան, ազգասիրութեան, թշուառների եւ հարստահարեալների պաշտպանութեան գաղափարի քողով վարագուրված մի ճարպիկ եւ խարդախ անձն ամբողջ տարիներ շահագործել է հայ եւ այլազգի հասարակութեան մարդասիրական զգացումները, պղծել է այդ վեհ գաղափարները ետասիրական, փառասիրական եւ, որ գլխաւորն է, շահասիրական ձգտումներով եւ մտադիր է դեռ շահագործել: Որքան էլ մեծ լինի յուսախարութիւնը, վհատութիւնը, հիասթափումն եւ յուսահատութիւնը, բայց թոյլ չ'տալու համար անզգամ շահատակութիւնը, նուիրական եւ վեհ գաղափարների շահագործումը շարունակվի, թոյլ չ'տալու համար որ հայ եւ այլազգի հասարակութիւնը մոլորման մէջ մնայ, մենք հարկաւոր ենք համարում յանուն հասարակական բարոյականութեան, յանուն ազգային շահերի պատուել խորտակել դիմակն եւ մերկացնել նրան հասարակութեան ստաջ իր իսկական դէմքով:

II

Ի՞նչ անուն պէտք է տալ մի մարդի , որ

1) Արիւնաքամ եղած Թիւրքիայի հայ ժողովրդի ազ-
թեան գործի համար հրաւէր է կարգում հայերին , դրամ է պահ-
ջում , Զէյթունում բռնութեան դէմ ապստամբված եղբայրնե-
օգնելու եւ ստանալով 4000 ոսկի , փառաւորապէս կլանում է հայ-
րենիքի ազատութեան գործին նուիրաբերված այդ դումարն , չլ-
խղճահարելով թէ այնտեղ , հայրենիքում , հաղարաւոր թշուառներ
մեռանում են սոված եւ մերկ .

2) Ամուսնանալով մի օրիորդի հետ , որ ամբողջ 15 տարի եղել
է նրան հաւատարիմ ընկերը , մխիթարիչը , օգնականը , ունենա-
լով արդէն 2 դուստկ , 14 եւ 10 տարեկան , մէկ օր յանկարծ թող-
ում է այդ ամբողջ ընտանիքը , երեսի վրայ ձգում նրան , անտէր-
նօգնական , առանց միջոցի , Պարիզի բարեկրօնական փողոցներում
նա այդպէս անխիղճ կերպով վարվում է մի կնոջ հետ առ որ-
ունեցած ունեւն սիրոյ եւ հաւատաշարժեան մասին նա աշխատու-
էր խաբեբայաբար համոզել հայ հասարակութիւնը մի ամբողջ հա-
տոր ոտանաւորներով .

3) Օգտուելով մօտ ազդականութեան իրաւունքով , նա մտնու-
է իբրեւ Յուդայ եւ դիշերային գող իր քեռու ընտանիքի մէջ եւ
կեղծ ու պատիր , փքուն , ուռած խօսքերով , ճոճած Ֆրագներով ,
օրինակ բերելով տիեզերքի մեծ մարդկանց , շլացնելով մի անմեղ ,
անփորձ , մատաղահաս օրիորդի , իր հարազատ քեռու աղջկան ,
մոլորեցնում է նորան հաւատացնելով թէ՛ շուտով կ'ստանայ ապա-
հարզան , կը բաժանվի կնոջից եւ կ'ամուսնանայ նրա հետ (երեսի
Հայաստանը ազատելու նպատակով !) , եւ իբրեւ կատարեալ քիւրդ
աւազակ փախցնում է աղջկան եւ երբ փախչելու ըստէին իր հա-
րազատ մայրն , որի խնամակալութեան յանձնված էր աղջիկն ,
գետինն է փովում իր որդու առաջ , աղաչում , պաղատում եւ ասում
« առաջ ինձ սպանիր , յետոյ տար այդ աղջկան » , նա այդ լուսա-

րապարակի վրայ ենք դնում եւ դրանով նորոգում մի դժբախտ հօր
ու ընտանիքի վէրքերը :

Մենք հրապարակով ներողութիւն ենք խնդրում յարգելի պ .
Ալէքսանդր Մելիք-Ազարեանից , որ , գուցէ , նրան վիշտ ենք պատ-
ճառում , բայց ներկայ դէպքն , այսինքն Աւետիք Նազարբէգի ստու-
րաքարչ վարմունքն , մի այնպիսի երեւոյթ է ներկայացնում ,
որին անտարբերութեամբ եւ չքմեղութեամբ վերաբերվելը հասա-
րակութեան կողմից յանցանք կը լինէր . նա մերկացնում է մեր
հասարակական կեանքի մի շատ տղեղ , պղուելի պատկեր : Եթէ
Աւետիք Նազարբէգն լինէր մի բոլորովին այնպստ , անձանօթ
մտող , եթէ նրա անունը երկար տարիներ կապված չը լինէր մեր
զգային կեանքի մի ամենանշանաւոր երեւոյթի , Թիւրքաց Հայե-
րի ազատութեան գործի պրոպագանդայի հետ , հայ յեղափոխական
գործի հետ , մենք , ի հարկէ , ոչ մի հարկաւորութիւն չէինք զգայ
հրապարակի վրայ դնել նրա ստորաքարչ վարմունքի հարցը : Բայց
մեն մի հասարակական եւ ազգային գործիչից ամենից առաջ պա-
նջվում է անպայման շիտակութիւն , ազնւութիւն , ով դաւա-
նանում է այդ սկզբունքներին , նա դաւաճանում է գործին : Ծնոր-
հիւ Ա . Նազարբէգեանի անբարոյական վարմունքին , նրա վը-
այ ծանրացած սոսկալի մեղադրութեան , որպիսին է 4000 ոսկու
յլանումն , Հնչակեան կուսակցութիւնը կորցրել է որ եւ է բարոյա-
ան ղեկնակութիւն մեր ժողովրդի աչքում . ժողովուրդը որ յա-
ասի դատում է զգացմունքներով եւ ոչ խելքով , այսպէս է տրա-
ւաբանում . « Եթէ մի կուսակցութեան պետը , առաջաւորը այսպիսի
չարագործ է , ինչ պէտք է լինի կուսակցութիւնը » : Եւ անա այսօր
ժողովուրդը մոռանում է , անարգում է խնկելի յիշատակը այն քաջ
հերոսների , երիտասարդ նահատակների , որոնք չեն խնայել իրանց
կեանքը զոհել , արիւնը թափել ազգի փրկութեան համար , կովե-
լով կամ սովամահ լինելով Զէյթունի լեռներում այն ժամանակ երբ
Ա . Նազարբէգը քէյֆ էր անում Լօնդօնում ազգի հաշուով , Թողնել
անպատիժ այդպիսի մարդին , որ ոտնակոխ է անում գաղափարը ,
որ իր անձնական ստոր կրքերին յագուրդ տալու համար չէ խղճա-
հարվում արատաւորել կուսակցութեան բարի անունը եւ համբաւը ,
յուսահատութիւն է առաջ բերում ժողովրդի մէջ — անկարելի է .
Հնչակեան կուսակցութիւնը , եթէ զեռ գոյութիւն ունի այդպիսի

մի կուսակցութիւն , բարոյապէս , իրաւագիտապէս պարտաւոր է
պատժել յանցաւորին , առանց մեղմացուցիչ հանգամանքների, ար-
տասանել իր դատաւճիռը եւ իրագործել որքան էլ խիստ լինի պա-
տիժը եւ դրանով վերականգնել իր համբաւը :

Թող Նազարէզը արդարանայ անաչառ դատարանի առաջ իր
գործած անազնիւ եւ անբարոյական վարմունքների մէջ : Թողնել
յանձաւորին անպատիժ , կը նշանակէ մեղսակից լինել նրան , եւ
մենք որ եւ է կապ , առնչութիւն չենք ունեցել Հնչակեան կուսակ-
ցութեան հետ , այլ միայն լրագրութեան միջոցով հետեւել ենք
նրա գործունէութեան , կարող ենք հաւատացնել , որ ամենալաւ
գործունէութեան եղանակը գձուձ , վատնոգի արարքներն դատա-
պարտելն է , շիտակութիւնն եւ մաքրասիրութիւնն է :



